

“ՈԳԵՇՆՉԵԼ ՀԱԶՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ”

ԲԱՅ ԴՌՆԵՐԻ ՕՐ

ՀՀ ԳԱԱ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մայիսի 3, 2018թ.

Մ.թ. մայիսի 3-ին, ժամը՝ 10:00-ին Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում լինելու է բաց դռների օր, որի շրջանակում հյուրընկալելու ենք տարբեր դպրոցների աշակերտների և իրենց ուսուցիչներին:

Յուրաքանչյուր դպրոցից մենք հյուրընկալելու ենք 11-րդ կամ 12-րդ դասարանների **հինգ** աշակերտի և իրենց ուղեկցող ուսուցչին/ուսուցչուհուն:

Անցյալ տարի մեզ են այցելել «Ֆոտոն» վարժարանի, «Հերացի» ավագ դպրոցի և Արտաշարի թիվ 5 ավագ դպրոցի սաները:

Բաց դռների օրվա նախնական ծրագիրը կցված է այս նամակին:

Եթե ցանկանում եք մասնակցել բաց դռների օրվան, ապա խնդրում ենք **մինչև ապրիլի 25-ը** (ներառյալ) պատասխան նամակով կամ հեռախոսազանգով հաստատել ձեր մասնակցությունը:

Նպատակը

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը տարին մեկ անգամ բացում է դռները աշակերտների առջև՝ հյուրընկալելով նրանց հանրակրթական տարբեր դպրոցներից: Բաց դռների նպատակն է այցելուներին ծանոթացնել ինստիտուտում գործող լաբորատորիաների հետ, աշակերտներին հնարավորություն տալ ինքնուրույն կատարել գիտական փորձեր, ինչպես նաև ունկնդրել կարճ դասախոսություններ, որոնք կվարեն ինստիտուտի գիտաշխատողները:

Ծրագիր

10:00 - Դասախոսություն #1

10:30 – Ծանոթություն լաբորատորիաների հետ

11:30 – Դասախոսություն #2

12:00 – Ընդմիջում (ջուր, հյութեր)

12:30 – Ընդմիջումից հետո աշակերտները բաժանվում են երեք խմբերի ըստ թեմաների:

Թեմա 1 – Բացահայտում ենք բջիջը

Այս թեմայի շրջանակում աշակերտները ծանոթանում են մանրադիտակի հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին, ինքնուրույն պատրաստում են բջջային պրեպրատներ և ուսումնասիրում բջիջները մանրադիտակի տակ, ծանոթանում բջջային տեսակների հետ:

Թեմա 2 – ԴՆԹ-ի աշխարհ

Այս թեմայի շրջանակում աշակերտները ծանոթանում են տարբեր օրգանիզմներից ԴՆԹ-ի անջատման մեթոդին, ինքնուրույն անջատում ԴՆԹ, իրականացնում ԴՆԹ-ի հատվածների շատացում ՊՇՌ (պոլիմերազային շղթայական ռեակցիա) մեթոդով:

Թեմա 3 – Համակարգչային կենսաբանություն

Այս թեմայի շրջանակում աշակերտները ծանոթանում են համակարգիչների կիրառություններին կենսաբանական հետազոտություններում, հաջորդականությունների համադրմանը, մոլեկուլային մոդելավորմանը և մոլեկուլային էվոլյուցիային:

Ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը: